

Ի՞նչ տեղի կունենա, եթե մենք չկարողանանք համաձայնության գալ վեճերի այլընտրանքային լուծման գործընթացից (ADR) օգտվելուց հետո:

Ի վերջո, եթե վեճը չլուծվի այլընտրանքային գործընթացի միջոցով, ապա պետք է պաշտոնական բողոքարկման գործընթաց սկսել:

Նահանգային գրավոր բողոք — այն ներկայացվում է Կալիֆոռնիայի նահանգին, հայտնելով, որ հանրային գործակալությունը (LEA) չի հետևել IDEA-ի օրենքներին և հետաքննություն է պահանջում:

Դատ /լսումներ պահանջել — հանգեցնում է գրավոր որոշման՝ փաստերի և օրենքի եզրակացություններով, որը կարող է հանձնարարել իրականացնել կոնկրետ գործողություններ:



Վեճերի այլընտրանքային լուծման գործընթացի (ADR), վերաբերյալ հավելյալ տեղեկություն ստանալու համար, խնդրում ենք դիմել դպրոցական ձեռ շրջանի ներկայացուցչին:

Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջան
Փոլեթ Քոսս
(818) 729-4449

Գլենդեյլի Դպրոցների Միացյալ Շրջան
Դեբբա Է. Ուայտեր
(818) 241-3111 ext 1205

Լա Քանյադայի Դպրոցների Միացյալ Շրջան
Դերեկ Այհորի
(818) 952-8397

Ֆուլթոնի ՄԷԼՊԱ
(818) 246-5378

Եթե ցանկանում եք օգտվել անկողնակալ միջնորդի անվճար ծառայություններից, խնդրում ենք դիմել Ֆուլթոնի ՄԷԼՊԱ-ի գրասենյակ վերհիշյալ հեռախոսահամարներով:




Հատուկ ուսուցման վեճերի լուծման գործընթաց (ADR)




Հատուկ ուսուցման ծառայություններ ստացող աշակերտների համար, վեճերի լուծման հասնելու տարբեր եղանակներ կան:

Մինչև նահանգային գրավոր բողոք կամ դատ/լսում պահանջելը, կան այլընտրանքային մեթոդներ, որոնց միջոցով կարելի է հասնել նույն արդյունքների ամենակարճ ժամանակում՝ պահպանելով ամուր աշխատանքային հարաբերություններ:

- Գաղտնի
- Արագ
- Անվճար
- Իրավական պաշտպանություն
- Արդյունքների ստացում






Ի՞նչ պետք է իմանալ վեճերի այլընտրանքային լուծման (ADR) վերաբերյալ:

ADR գործընթացն ավելի քիչ պաշտոնական է, քան դատը և լուծմները և նպատակ ունի պահպանել դրական հարաբերություններ ընտանիքների և դպրոցական շրջանի (այսինքն LEA) աշխատակազմի միջև՝ համատեղ աշխատելով լուծում գտնելու համար: Ֆուլթիլլ ՍԷԼՊԱ-ն և նրա շրջանները հավատարիմ են այս գործին:

ADR –ի տարբերակներ



Որո՞նք են ADR-ի տարբերակները:

Երբեմն IEP թիմերը համաձայնության չեն գալիս աշակերտի կրթության հետ կապված հարցերի շուրջ: Այդ դեպքերում, երբ թիմը չի կարողանում համաձայնության գալ, հասանելի են հետևյալ ծառայությունները:

Կամավոր չեզոք հաշտարարություն— չեզոք հաշտարարն ուղղորդում է IEP թիմին, որպեսզի թիմի բոլոր անդամներն իրենց գնահատված զգան և ապահովեն երկխոսություն, որը կկենտրոնանա աշակերտի կրթական ծրագրի վրա:

Կամավոր միջնորդություն - Այս ծառայությունը, ցանկացած ժամանակ, հասանելի է, երբ ծնողների և մանկավարժների միջև տարաձայնություններ կան հատուկ ուսուցման և/կամ հարակից ծառայությունների վերաբերյալ և աջակցում է յուրաքանչյուրին լսել միմյանց՝ համաձայնության գալու համար: